

ԳԻՏՈՐԳ

Դեկտեմբեր 2006

(37)

Մ Ա Ր Դ Ո Ւ Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ը Շ Ա Յ Ա Ս Ա Ն Ո Ւ Ս



Հայաստանի Հեղինակյան Կոմիտե



Ի դաժեղանություն ժիրայր Սեֆիլյանի կազմակերպված ցույցը փետրվարի 2-ին



ՖՈՏՈՂՈՐ

ՄԱՐԴՈՒ *իրավունքները*

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԴԻՄԻՏՐ

Նախագիծն իրականացվում է **Բաց հասարակության ինստիտուտի** օժանդակությամբ (Բուդապեշտ)

Դիտորդ

Դեկտեմբեր
2006թ.
թիվ 7 (37)



Ծրագրի ղեկավար
Ավետիս Իսխանյան
Խմբագիր
Վիդես Գրիգորյան
Գեղ. խմբագիր
Արամ Ուռուսյան
Սրբագրիչ
Թագուհի Սուսիկյան

Թողարկման տասասխանասու
Ավետիս Իսխանյան

**«Հայաստանի
հելսինկյան կոմիտե»**

հասարակական
կազմակերպություն

Պետական գրանցման
վկայական № 1792,
սրված 20. 02.1996 թ.
Տղախանակ՝ 700

Երևան, Պուլսկինի 3 ա
Ղեռ.՝ 560372

Էլ-հասցեն. hca@xter.net
www.hra.am/ahc/index.htm

Շաբաթի 1-ին էջին՝
Դեկտեմբերի 7-ին նախագահի նստավայրի դիմաց եզրի Գյուլիզար Ավդալյանի ինքնահրկիզման փորձը՝ որդես բողոքի նշան իր որդու՝ Զյարամ Ավդալյանի ստանության գործի անադար քննության դեմ:
(ՖՈՏՈՂՈՒՐ)



Հայաստանի
Հելսինկյան
Կոմիտե

Ի տառաջանություն ժիրայր Սեֆիլյանի կազմակերպված ցույցը փետրվարի 2-ին

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ 3 Ո Ւ Ն

Մարդու իրավունքները Հայաստանում.
սարեկան զեկույց (2006թ.)

Նախաբան	2
1. Կոռուպցիա	4
2. Ընտրություններ	5
3. Դատական իշխանություն	7
4. Զրեակասարողական հիմնարկների դայնամաները, խոստանգումներ և անմարդկային վերաբերմունք	9
5. Մարդու իրավունքները ՀՀ գինված ուժերում	13

6. Խոսքի և արտահայտվելու ազատություն	14
7. Զաղափական միավորումների իրավունք	18
8. Հանրահավաքներ, ժողովներ, երթեր, ցույցեր	20
9. Խղճի ազատություն, այլընտրանքային ծառայություն	21
10. Ազգային փոքրամասնություններ	23
11. Սեփականության իրավունք	23

Մարդու իրավունքները Հայաստանում.

Տ ա Ր Ե Կ ա ն զ Ե Կ ո ւ յ ց 2006թ.

Հայաստանի հելսինկյան կոմիտե

Ներածություն

2006թ. առանձնապես աչքի չընկավ ներքաղաքական ակտիվությամբ: Հատկանշական էր հատկապես իշխանական կռաւիցիայից «Օրինաց երկիր» կուսակցության դուրս գալը և ընդդիմադիր կուսակցություն դառնալու հայտարարությունը: Հայաստանի հայտնի մեծահարուստ, գործարար Գագիկ Ծառուկյանը ստեղծեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը, ունենալով իշխանության հովանավորությունը և հզոր ֆինանսական միջոցներ օգտագործելով, կարճ

ժամանակամիջոցում համարեց կուսակցության անդամների թիվը՝ հասցնելով, ըստ իրենց տեղեկատվության, շուրջ 370 հազարի:

2006 թ. կատարվեցին աղմկահարույց սպանություններ: Ինչպես նշում է «Հայկական ժամանակ» օրաթերթը («Հիթ-շքերթ՝ «Սպանություն-2006», 2006 թ. սեպտեմբերի 8)՝ աղմկոտ սպանությունների առումով, վերջին հինգ-վեց տարիների համեմատ, 2006 թ. արձանագրված դեպքերն իրենց տեսակով և քանակով ռեկորդային են: Հիմնականում ցերեկով, մարդկանց

աչքի առաջ կատարվել են տասնյակ սպանություններ (սպանվել են ոստիկանության աշխատակից, ինկասատոր, հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության պետը, գյուղապետներ և այլ պաշտոնյաներ, գործարարներ, քրեական հեղինակություններ և պատահական անցորդներ), որոնք մեծ մասամբ չեն բացահայտվել, և հասարակությունը դրանց վերաբերյալ հստակ պատասխաններ չի ստացել:

Դեկտեմբերի 19-ին անհայտ անձինք տան առաջ սպանել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ, Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի գյուղապետ Ռուանդ Մկրտչյանին: Դրանից չորս ամիս առաջ նա գյուղապետի ընտրություններում հաղթել էր իշխող Հանրապետական կուսակցության անդամին:

Եղել են նաև քաղաքական, հասարակական գործիչների նկատմամբ ծեծի, ահաբեկման, քրեական հետապնդումների դեպքեր: Հոկտեմբերի 10-ին ծեծի ենթարկվեց Երևանի նախկին քաղաքապետ, ներքին գործերի նախկին նախարար, այժմ՝ ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սուրեն Աբրահամյանը: Աբրահամյանի ծեծը շատերը կապում են նրա կողմից դեպքի նախօրյակին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին քննադատելու հետ:

Դեկտեմբերի 9-ին Ազգային անվտանգության աշխատակիցները ձերբակալել են «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության համակարգող Ժիրայր Սեֆիլյանին, իսկ դեկտեմբերի 10-ին՝ «Հայրենիք և պատիվ» կուսակցության Արագածոտնի մարզի ղեկավար Վարդան Մալխասյանին: Նրանց դեմ քրեական գործ է

հարուցվել՝ քրեական օրենսգրքի «ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու հրապարակային կոչեր անելու» 301-րդ հոդվածով:

Հայաստանի Հանրապետությունը 2006 թ. մարտի 27-ին միացել է ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրին, իսկ 2006 թ. նոյեմբերի 14-ին՝ Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականությանը: Այս երկու ծրագրերով էլ նշվում է Ժողովրդավարական կառույցների և օրենքի իշխանության ամրապնդման՝ Հայաստանի կողմից կատարվելիք գործողությունների համապարփակ շրջանակ՝ դատաիրավական համակարգի բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի, Հայաստանի միջազգային պարտավորություններին համապատասխան (ԳՀՀ, ԵԽ, ԵԱՀԿ, ՄԱԿ)՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման ոլորտները: Այդ առաջնայնություններից բացի՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձված զանգվածային լրատվության միջոցների և դրանց գործունեությունը կարգավորող մարմնի, դատա-



Ժիրայր Սեֆիլյանը

րանների, Արդարադատության խորհրդի անկախության, տեղական ինքնակառավարման ամրապնդման, հանրահավաքներ կազմակերպելու ազատության, բազմակարծության ապահովման և սեփականության իրավունքի պաշտպանության վրա:

«Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի հետագա ճակատա-

գիրը, որով Հայաստանին տրամադրվելու է 235 մլն ԱՄՆ դոլար, կախված է Հայաստանի կողմից սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացումից բացի՝ 2007 թ. ընտրությունները միջազգային չափանիշներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու՝ Հայաստանի պարտավորության կատարումից:



Կոռուպցիա

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» (ԹԻ) կազմակերպության 2006 թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ)¹ համաձայն՝ ուսումնասիրության ենթարկված 163 երկրների շարքում Հայաստանը գտնվում է 3.0-ից ցածր ԿԸՀ ունեցող երկրների շարքում (ըստ «10-0» սանդղակի, որտեղ «10»-ը ամենամաքուր երկրի համաթիվն է, իսկ «0»-ն՝ ամենակոռումպացվածինը): Վերջին երեք տարվա ընթացքում Հայաստանում չի արձանագրվել որևէ առաջընթաց, և երկրի ԿԸՀ-ն 2004, 2005 և 2006 թվականներին համապատասխանաբար կազմել է 3.1, 2.9 և 2.9:

Ըստ «Ֆրիդոմ հաուզ» կազմակերպության կողմից 2006 թ. հրատարակված «Անցումային երկրները» զեկույցի², Հայաստանում կոռուպցիայի մակարդակը չի փոխվել կառավարման ոչ մի ոլորտում: 1999 թվականից ի վեր երկրի կոռուպցիայի համաթիվը մնացել է անփոփոխ՝ 5.75 (ըստ «1-7» սանդղակի, որտեղ «1»-ը նշանակում է

«բացարձակ մաքուր», իսկ «7»-ը՝ «բացարձակ կոռումպացված»): «Գելափի 2006 թ. կոռուպցիայի համաթիվ» ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանը զբաղեցրել է 82-րդ տեղը 101 դիտարկված երկրների շարքում ու դասվել որպես 69-րդը (ամենափոքր թիվը ցույց է տալիս, որ քիչ հավանական է՝ բնակչությունն ընկալի կոռուպցիան որպես տարածված երևույթ, իսկ ամենաբարձր թիվը համապատասխանաբար արտացոլում է դրա մեծ հավանականությունը)³:

Համաշխարհային բանկի վերջերս հրատարակած «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությանը երկրներում (երրորդ հաշվետվություն). ո՞վ է հասել հաջողությունների...և ինչո՞ւ» զեկույցն ընդգծել է, որ, չնայած հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակմանը՝ 2003 թ., և Կոռուպցիայի դեմ պայքարի բարձրաստիճան խորհրդի ստեղծմանը՝ 2004 թ., իրավիճակը Հայաստա-

1. <http://www.transparency.org/policy-and-research/surveys-indices/cpi>
2. <http://www.freedomhouse.hu/nit.html>
3. <http://www.gallupoll.com/content/?ci=25612&pg=1>

նում, կոռուպցիայի բազմաթիվ բա-
ղադրիչների առումով, 2005թ. դարձել է
ավելի վատ, քան 2002 թ.⁴:

2006 թ. մարտին ընդունվել է Հա-
յաստանի մասին Եվրոպական երկր-
ների կոռուպցիայի դեմ պայքարի խմ-
բի (GRECO) առաջին զեկույցը, որում
նշվել է, որ երկրում կոռուպցիան
«...լուրջ հիմնախնդիր է, որը բացասա-
բար է ազդում հանրային ծառայու-
թյան շատ ոլորտների վրա»⁵, և տրվել
24 առաջարկություն՝ կոռուպցիայի
դեմ պայքարի ոլորտում առկա իրավի-
ճակի բարելավման համար⁶:

Սույն թվականի դեկտեմբերին
Փարիզում տեղի ունեցած Տնտեսա-
կան համագործակցության և զար-
գացման կազմակերպության (OECD)
մոնիթորինգի 6-րդ հանդիպման ըն-
թացքում քննարկվել է Հայաստանի
առաջընթացը 2004 թ. առաջարկու-
թյունների կատարման գործում և ըն-
դունվել երկրի գնահատման (մոնիթո-

րինգի) զեկույցը: Ձեկույցն ընդգծել է
մի շարք դրական միտումներ, սակայն
նաև նշել է, որ իրականացված միջո-
ցառումներից շատերը միայն առաջին
քայլն են կոռուպցիայի նվազեցման
ճանապարհին, և որ դեռևս մեծ աշխա-
տանք է պահանջվում թեթևացնելու
կոռուպցիայի «բեռը» հանրային և տն-
տեսական կյանքի տարբեր ոլորտնե-
րում⁷:

Հայաստանի կողմից 2005 թ. մա-
յիսին ստորագրված Միավորված ազ-
գերի կազմակերպության «Կոռուպցի-
այի դեմ պայքարի մասին» կոնվենցի-
ան (UNCAC)⁸ վավերացվել է ՀՀ Ազ-
գային ժողովի կողմից 2006 թ. հոկտեմ-
բերին: Իսկ 2006 թ. նոյեմբերին Եվրա-
միության Եվրոպական հարևանու-
թյան քաղաքականության (ENP) շր-
ջանակներում վավերացվել է Հայաս-
տանի գործողությունների ծրագիրը,
որում կոռուպցիայի դեմ պայքարը նե-
րառված է որպես գերակա ոլորտ⁹:

4. «Կոռուպցիայի դեմ դայվարը անցումային մեթոդային երկրներում (երրորդ հաշվետվություն).
նվ է հասել հաջողությունների... և ինչու»: Համաշխարհային բանկ, 2006թ., էջ 63
5. <http://www.greco.coe.int/evaluations>
6. <http://www.greco.coe.int/evaluations>
7. <http://www.oecd.org/document/35/0,2340,en-2649-34857-37846947-1-1-1-1,00.html>
8. <http://www.unodc.org/pdf/crime/convention-corruption/signing/Convention-e.pdf>
9. <http://www.delarm.cec.eu.int/en/press/16-11-2006.pdf>

2.

Ընտրություններ

1999 թ. ընդունված
ը ն տ ր ա կ ա ն
օրենսգիրքը այս տարիների ընթաց-
քում հինգ անգամ ենթարկվել է փոփո-
խությունների: 2006 թ. դեկտեմբերի
22-ին հերթական անգամ փոփոխու-
թյուններ և լրացումներ են կատարվել:
Արդյունքում.

- *սրացիոնար բուժհիմնարկնե-
րում այսուհետք քվեարկելու են
շրջիկ քվեապուսիերով,*
- *համապետական ընտրու-
թյուններ նշանակվելու օրվա-
նից սկսած՝ մինչև ընտրու-
թյունների արդյունքների ամ-
փոփման վերաբերյալ որոշում*

ընդունելը ներառյալ ընկած ժամանակահատվածում հանվել է ընտրական հանձնաժողովների քվորումի պահանջը, այսինքն՝ հանձնաժողովների հերթական նիստերը իրավազոր են՝ անկախ նիստին ներկա անդամների քվից, եթե ապառված են հանձնաժողովի նիստ գումարելու համար անհրաժեշտ քվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած հանձնաժողովի անդամների քվիը մեծ է դեմ քվեարկածների քվից: Չայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի չայնը վճռորոշ է (հոդված 39, կետ 6):

- *հանվել է նույն անձի՝ 2 անգամից ավելի անընդմեջ համայնքի ղեկավար դառնալու արգելքը (հոդված 123, կետ 9):*

2006 թ. համապետական ընտրություններ, հանրաքվեներ Հայաստանում չեն եղել: Անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնցում հաղթել են իշխող կուսակցությունների կամ նրանց կողմից հովանավորվող թեկնածուները: Հատկանշական է Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետի ընտրությունը: Հաղթելու հիմնական թեկնածուներ էին համարվում գործող թաղապետ, «Նիզ-Ապարան» հայրենակցական միության (նախագահ՝ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյան) անդամ Արծրուն Խաչատրյանը և Հանրապետական կուսակցության քաղխորհրդի անդամ Արման Սահակյանը (Ազգային ժողովում Հանրապետական կուսակցու-

թյան խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի որդին): Խաչատրյանների և Սահակյանների ընտանիքների միջև Աջափնյակի թաղապետի պաշտոնի համար հակամարտությունն ընթանում է դեռևս 1999 թվականից, երբ ընտրությունների ժամանակ տեղի ունեցան ընդհարումներ, կիրառվեց հրազեն, և եղան վիրավորներ: Հակամարտությունը դրսևորվեց նաև այս ընտրությունների ընթացքում: Այս անգամ Հանրապետական կուսակցության նորընտիր քաղխորհուրդը (նախագահ՝ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյան) որոշում կայացրեց չաջակցել իրենց կուսակից Ա. Սահակյանին: Ներիշխանական համաձայնության արդյունքում չառաջադրվեցին ոչ Արծրուն Խաչատրյանը, ոչ էլ Արման Սահակյանը: Առաջադրվեց հանրությանն անհայտ Ռուբեն Հովսեփյանը (գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի եղբայրը):

Առաջադրված էին նաև այլ թեկնածուներ՝ Դաշնակցության անդամ Գագիկ Սարգսյանը և «Ժողովրդավարական ուղի» կուսակցության անդամ Իշխան Արշակյանը (նախագահ՝ Ազգային ժողովի պատգամավոր Մանուկ Գասպարյան):

Սակայն, ըստ վերլուծաբանների, ընտրությունների ելքը կանխորոշված էր՝ հօգուտ Ռուբեն Հովսեփյանի: Հոկտեմբերի 29-ին անցկացված ընտրություններում հաղթեց Ռուբեն Հովսեփյանը:

Ըստ մամուլում հրապարակված տեղեկությունների՝ ընտրություններին ժողովուրդը պասիվ է եղել, և ընտրությանը մասնակցել են միայն նրանք, ում քվեարկության են տարել միկրոավտոբուսներով (*մանրամասն տե՛ս «Հայկական ժամանակի» 2006 թ. հոկտեմբերի 31-ի համարում*):

3.

Դասական իշխանություն

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կազմավորման իրավական հիմքերը դրվեցին ՀՀ 1995 թ. Սահմանադրությամբ: Համաձայն դրա՝ ՀՀ-ում գործում է ընդհանուր իրավասության եռաստիճան դատական համակարգ և Սահմանադրական դատարանը: Սահմանադրությամբ հռչակվեցին դատարանների անկախության երաշխիքները:

Սակայն դատարանների անկախության հիմնական երաշխիքը՝ գործադիր իշխանությունից անկախության օրենսդրական հիմքերը, չապահովվեցին: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ ՀՀ նախագահը (որը գործադիր իշխանության գլուխն էր), Արդարադատության խորհրդի կամ արդարադատության նախարարի առաջարկությամբ, նշանակում և ազատում է դատավորներին, հաստատում է դատավորների պաշտոնական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ցուցակները, ինչպես նաև՝ համաձայնություն է տալիս դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Բացի ՀՀ նախագահին առաջարկություններ ներկայացնելու լիազորությունից՝ Արդարադատության խորհրդին վերապահվեց նաև գործող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություն: Ընդ որում, Արդարադատության խորհուրդը գլխավորում էր ՀՀ նախագահը, իսկ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն էին: Արդյունքում՝

«Դատարաններն իրականում անկախ չեն գործադիր իշխանությունից:

Ըստ «Ամերիկյան իրավաբանների ընկերակցության» երևանյան գրասենյակի՝ գործադիր իշխանության մարմինների վերոնշյալ լիազորությունները երկյուղ առաջացնելու և դատավորների վրա իրենց աշխատանքում ճնշում գործադրելու միջոց են, իսկ դատավորների նկատմամբ կամայական ընտրությամբ հետապնդումների իրականացումը (կարգապահական պատասխանատվություն, կոռուպցիայի համար դատական հետապնդում, լիազորությունների դադարեցում) հանգեցնում է նրան, որ դատավորներն ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավվում են հակաօրինական գործունեության մեջ: Դեռևս գերակայում է խորհրդային ժամանակների մտածելակերպը, ըստ որի՝ իրավապահ մարմինները (դատախազություն, ոստիկանություն) իրավական համակարգում դասվում են բոլորից վեր, հետո՝ դատավորները, և վերջում՝ փաստաբանները» (*Դատական բարեփոխումների ինդեքսը Հայաստանի համար. 2004 ղեկընկեր. ABA CEELI. 2-րդ հատոր, 2005 թ., էջ. 54, 58*):

2005 թ. նոյեմբերի 27-ին կատարված սահմանադրական փոփոխություններով մասնավորապես՝

1. փոխվեց Սահմանադրության 94-րդ հոդվածը, արդյունքում՝ դատարանների անկախության երաշխիքները ոչ թե հանրապետության նախագահին է, այլ Սահմանադրությունը և օրենքը,

2. փոփոխել են դատավորների նշանակման/լիազորությունների վաղաժամկետ դադարեցման գործում կարևորագույն դեր ունեցող մարմնի Արդարադատության խորհրդի կազմը և լիազորությունները:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում (Սահմանադրություն, 94.1 հոդված) Արդարադատության խորհուրդը չի գլխավորելու հանրապետության նախագահը: Արդարադատության խորհրդի նիստերը վարելու է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով ընտրված 9 դատավորներ, հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված 2-ական իրավաբան-գիտնական:

2005 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Արդարադատության խորհուրդը (*Սահմանադրություն, 95-րդ հոդված*) այսուհետ ինքնուրույն է կազմելու և ՀՀ նախագահի հաստատմանը ներկայացնելու դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները (մինչև փոփոխությունները ԱԽ-ը ցուցակները կազմում էր արդարադատության նախարարի առաջարկով), եզրակացություն է տալու վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորների ներկայացված թեկնածությունների վերաբերյալ: Մինչև փոփոխությունները սահմանված էր, որ նշված դատավորների թեկնածությունները

առաջարկվում են արդարադատության նախարարի կողմից, փոփոխությունների արդյունքում Սահմանադրությամբ ամրագրված չէ առաջարկող սուբյեկտը: Կարծիք կա, որ այն կշարունակի ներկայացնել արդարադատության նախարարը:

Պահպանվել է Սահմանադրության մեջ 1995 թ. ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ Արդարադատության խորհրդի առաջարկած դատավորների լիազորությունները դադարեցնում կամ առաջարկված թեկնածուին դատավոր է նշանակում ՀՀ նախագահը: Այսինքն՝ վերջնական որոշում կայացնողը նախագահն է, և սահմանված չէ, թե ինչ կարող է անել Արդարադատության խորհուրդը, եթե նախագահը դատավոր չի նշանակում իրենց առաջարկած թեկնածուին:

2005 թ. սահմանադրական փոփոխություններից հետո յուրաքանչյուր անձ Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ստացավ (*Սահմանադրություն, հ. 101*): Յուրաքանչյուրը կարող է վիճարկել կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթների սահմանադրականությունը, եթե սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: 2006 թ. հուլիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Սահմանադրական դատարան ներկայացվել է 15 անհատական դիմում, որոնց վերաբերյալ քննվել է 7 գործ, դրանցից 2-ի դեպքում վիճարկվող դրույթները ճանաչվել են սահմանադրությանը հակասող և անվավեր:

4.

Քրեակասարողական հիմնարկների դայնամները, խոճանգումներ և անմարդկային վերաբերմունք

«Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ 2004 թ. մայիսի 14-ին ձևավորվեց ՀՀ արդարադատության նախարարության (ԱՆ) քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբ: Այդ խմբի գործունեության կարգի դրույթների համաձայն՝ խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել կալանավորված անձանց պահելու քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ), ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը (նաև, կալանավորված անձի համաձայնությամբ, նրա անձնական գործերին և գրագրությանը՝ բացի գաղտնի փաստաթղթերից), հիմնարկի իրավիճակին, ինչպես նաև՝ հանդիպել կալանավորված անձանց: 2005 թ. ընդունվեց դատապարտյալներին պահելու կարգին վերաբերող ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, որից հետո խմբի իրավասությունները տարածվում են նաև դատապարտյալներին պահելու համար նախատեսված ՔԿՀ-ների վրա:

Դիտորդական խումբը հրապարակել է իր 2006 թ. գեկույցը՝ հիմնված 2005 թ. այցելությունների վրա: Չեկույցում նկարագրված են ՔԿՀ-ների ընդհանուր վիճակը, նյութական, սանիտարահիգիենիկ պայմանները, արտաքին աշխարհի հետ կապը, ինչպես նաև՝ կալանավորների նկատմամբ հիմնարկների անձնակազմների վերաբերմունքը: Չեկույցում հատուկ ուշ-

ադրություն է դարձված «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ին, որը գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) շենքում և դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան:

Ի տարբերություն այլ ՔԿՀ-ների, որոնք 2001 թվականից փոխանցվեցին ԱՆ ենթակայության տակ, «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ն միայն 2003 թ. հունվարից անցավ այդ նախարարության ենթակայության տակ: Խմբին դեռևս հայտնի չէ որևէ օրենսդրական կամ ենթաօրենսդրական փաստաթուղթ, որի հիման վրա կալանավորվածները պահվում են «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում: Խմբի դիտարկումները թույլ են տալիս ենթադրելու, որ «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում պահվում են քաղաքական ենթատեքստ պարունակող քրեական մեղադրանքով ձերբակալված անձինք (օրինակ՝ 2004 թ. սպրիլին ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին մասնակցած, այնուհետև ձերբակալված ընդդիմության ներկայացուցիչներ), օտարերկրացիներ, ինչպես նաև՝ հասարակական հնչեղություն ստացած քրեական գործերով մեղադրյալ անձինք:

Ի տարբերություն մյուս ՔԿՀ-ների՝ «Երևան-կենտրոն» ՔԿՀ խմբի այցելությունը սկսվում է ԱԱԾ անցագրային կետից, փաստորեն, ՔԿՀ մուտք գործելը նույնացվում է ԱԱԾ մուտք գործելու հետ:

«Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում արտաքին աշխարհի հետ կապը չի համապատասխանում օրենքով սահման-

ված չափանիշներին: Կալանավորվածներին չի թույլատրվում ունենալ ռադիոընդունիչ: Նրանք զրկված են թերթեր ստանալու հնարավորությունից, կարող են կարդալ միայն հիմնարկի պետի կողմից ընտրված թերթերը («Հայաստանի Հանրապետություն», «Հայոց աշխարհ», «Ազգ»):

Կալանավորները զրկված են հեռախոսակապից, միայն առանձին դեպքերում, հիմնարկի պետի ցանկությամբ, որոշ կալանավորներ կարող են օգտվել պետի ծառայողական հեռախոսից: Հիմնարկում չի պահպանվում նամակագրության գաղտնիությունը, նամակների բացումը և ընթերցումը բացատրվում են այլ իրեր փնտրելու պատճառաբանությամբ:

«Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում, հակառակ ՀՀ ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջների, օտարերկրյա քաղաքացիները ՀՀ քաղաքացիներից առանձին չեն պահվում: Բացի այդ՝ օտարերկրյա քաղաքացիներին իրենց համար հասկանալի լեզվով չեն բացատրվում նրանց իրավունքները:

Կալանավորվածներին պահելու մասին օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաև՝ ոստիկանության զորքերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք պահվում են մյուսներից անջատ, սակայն 2005 թ. դեկտեմբերի 30-ին «Վարդաշեն» ՔԿՀ-ից, որը նախատեսված է նախկին իրավապահ մարմինների աշխատակիցների համար, առանց որևէ պատճառաբանության, «Երևան-կենտրոն» ՔԿՀ է տեղափոխվել նախկինում դատախազության աշխատակից, այժմ փաստաբան Վահե

Գրիգորյանը: Նա պահվել է ընդհանուր խցում այլ կալանավորների հետ, որոնց մեջ եղել է կրկնահանգագործ:

«Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում պահվող կալանավորները և նրանց փաստաբանները կասկածներ ունեն, որ իրենց հանդիպումները գաղտնալվում են: Չեկույցի պատրաստման ընթացքում «Առավոտ» օրաթերթում (4.03.2006 թ.) հրապարակում եղավ, ըստ որի՝ ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետ Ա. Սիրգոյանը դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր օպերատիվ տեխնիկական վարչության պետ Ռ. Ափոյանին՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ծառայություններին՝ տեսաձայնագրառել և ձայնագրառել «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում պահվող մեղադրյալներ Չավեն և Վլադիմիր Սկրոչյանների և նրանց պաշտպանների առանձնատեսակցությունները և արդյունքների մասին հայտնել նախաքննության մարմիններին:

2005 թ. «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ում արձանագրվել է նաև անազատության մեջ պահելու անօրինական դեպք: Այնտեղ պահվող Սիլվա Ասատրյանի կալանքի տակ պահելու ժամկետը լրացել էր 23.11.2005 ժամը 17:45-ին: (Առաջին ատյանի դատարանը 22.11.2005-ին մերժել է կալանքը երկարացնելու մասին միջնորդությունը: Որոշումը նույն օրը ժամը 11:00-ին ներկայացվել է «Երևան-կենտրոն» ՔԿՀ): Ասատրյանը 23.11.2005-ին, ՔԿՀ-ի չորս աշխատակիցների հսկողությամբ, ուղարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի նիստը հետաձգվել է մինչև 24.11.2005 թ., սակայն Ասատրյանին չեն ազատել, այլ հետ են տարել ՔԿՀ և անօրինական անազատության մեջ պահել մինչև 24.11.2005թ., երբ կայացվել է վերաքննիչ դատարանի որոշումը՝ կա-

լանքի ժամկետը երկարացնելու մասին:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ չնայած «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ն իրավական կարգավիճակով գտնվում է արդարադատության նախարարության ենթակայության տակ, բայց, փաստորեն, գործում է որպես ազգային անվտանգության ծառայության մեկուսարան:

Հաշվի առնելով, որ «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ն գտնվում է ազգային անվտանգության ծառայության տարածքում, և տեխնիկապես հնարավոր չէ հիմնարկները տարանջատել, զեկույցում առաջարկվում է դադարեցնել «Երևան-կենտրոն» ՔԿՀ-ի գործունեությունը:

Ինչ վերաբերում է հիմնարկներում ազատագրկվածներին տրվող սննդի որակին, ապա, բացառությամբ 1-2 հիմնարկների, այն անբավարար է, խոհանոցներում տիրում է հակասանիտարական վիճակ («Նուբարաշեն», «Գյումրի»): Ստացվել է տեղեկատվություն «Գորիս» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում ազատագրկվածներին, որպես պատիժ, ճաշից զրկելու դեպքերի մասին:

Բոլոր ՔԿՀ-ներում բուժսպասարկումը հեռու է բավարար լինելուց: Հիմնարկները համալրված չեն ինչպես անհրաժեշտ մասնագետներով, այնպես էլ բժշկական սարքավորումներով և դեղորայքով:

2006 թ. ընթացքում խումբը դաժան վերաբերմունքի դեպքեր է արձանագրել «Գորիս» քրեակատարողական հիմնարկում: 2006 թ. մայիսի 6-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության դիտորդական խմբի անդամներ Միքայել Արամյանը, Ավետիք Իշխանյանը, Անդրանիկ Հարությունյանը և Արման

Դանիելյանը, ստացված ահազանգերի հիման վրա, չծրագրված այցելություն կատարեցին «Գորիս» ՔԿՀ: Խմբի անդամները հանդիպեցին հիմնարկի ղեկավարության և մի շարք ազատագրկված անձանց հետ, ինչպես կալանավորվածների և դատապարտյալների խցերում, այնպես էլ՝ պատժախցերում: Հանդիպումների արդյունքում խումբը պարզեց, որ 2006 թ. ապրիլի 29-ին «Գորիս» ՔԿՀ-ում իրականացվել է հատուկ «միջոցառում»՝ ՀՀ ոստիկանության ներքին գործերի ուղեկցող խմբի ծառայողների և «Գորիս» ՔԿՀ աշխատակիցների կողմից, որի ընթացքում կատարվել է զանգվածային խուզարկություն բոլոր խցերում: Խուզարկության ընթացքում ձեռնաշղթայել են ազատագրկվածներին, հանել խցերից դուրս և, խցերը տակնուվրա անելով, վերցրել են նրանց անձնական իրերն ու հագուստը և ՔԿՀ-ի բակում այրել: Անձնական իրերի մեջ եղել են ազատագրկվածների փաստաթղթերը, ընտանեկան լուսանկարները, հագուստը, ներքնաշորերը, սափրվելու պարագաները և անձնական օգտագործման այլ իրեր: Ազատագրկվածները խուց բերվելուց հետո հայտնաբերել են, որ իրենց պատկանող ծխախոտներն անհետացել են, իսկ թեյը, սուրճը և շաքարավազը թափված են խցի հատակին: Չանգվածային խուզարկության ժամանակ խցերից մեկում ջարդուփշուր է արվել ազատագրկվածներին պատկանող ռադիոընդունիչը: Խուզարկությունները հիմնականում ուղեկցվել են բռնություններով: Առանձնագրույցների արդյունքում խումբը փաստում է, որ իրականացված «միջոցառման» ընթացքում առնվազն 5 ազատագրկված ենթարկվել է դաժան ծեծի: Ծեծի ժամանակ ազատագրկվածների ձեռքերը եղել են շղթայված: Ըստ ազատագրկվածների՝

ծեծին մասնակցել է 7-10 հոգի: Ծեծել են ռետինե մահակներով, ոտքերով, ինչպես նաև՝ կիրառվել է էլեկտրաշոկ: Բռնության ենթարկված 3 ագատազրկվածները, ըստ իրենց խոսքերի, ծեծի արդյունքում ուշագնաց են եղել: Նրանց մարմինների տարբեր հատվածներում (մեջքերին, ոտքերին, դեմքերին) խմբի այցելության ժամանակ դեռևս պահպանված էին ծեծի հետքերը, դաստակներին պահպանված էին ձեռնաշղթաներից մնացած վերքերը: Ծեծի ենթարկվածները չեն ստացել բժշկական օգնություն, իսկ նրանց վնասվածքները չեն արձանագրվել բժշկական քարտերում:

Բռնության ենթարկված ագատազրկվածներից 3-ը խմբի այցելության ժամանակ գտնվում էին պատժախցերում: Նրանք իրենց նկատմամբ կիրառված բռնությունների և նվաստացումների դեմ հայտարարել էին հացադուլ՝ որպես բողոքի նշան: Ըստ հիմնարկի պետի՝ «միջոցառման» պատճառ է հանդիսացել դատապարտյալ Արթուր Այվազյանի և ռազմական դատախազության քննիչի միջև «Գորիս» ԲԿՀ-ի տարածքում ապրիլի 26-ին տեղի ունեցած վիճաբանությունը, ինչի մասին պետը հայտնել է քրեակատարողական վարչությանը: Արդյունքում՝ ապրիլի 29-ին «Գորիս» ԲԿՀ են ժամանել ՀՀ ոստիկանության ներքին գործերի ուղեկցող խմբի ծառայողներ, որոնք էլ, «Գորիս» ԲԿՀ աշխատակիցների հետ համատեղ, իրականացրել են վերը նշված «միջոցառումը»:

Պատժախցում գտնվող Սարգիս Հարությունյանին, դեռ մինչև ապրիլի 29-ի դեպքերը, ռեժիմի խախտման պատճառով հիմնարկի ղեկավարությունը նշանակել է պատիժ՝ 5-օրյա պատժախուց: Սակայն պատիժը հետաձգվել է բժշկի առաջարկությամբ՝

առողջական խնդիրների պատճառով: Մայիսի 4-ին Հարությունյանը ենթարկվել է սոնոգրաֆիկ հետազոտության, ինչի արդյունքում պարզվել է, որ նա կարող է տեղափոխվել պատժախուց: Ըստ իր հայտարարության՝ մայիսի 4-ին, որպես բողոքի նշան, նա կուլ էր տվել մեխ և այլումինե գոլալի պոչը: Նրան մինչև խմբի այցելության պահը ռենտգենյան հետազոտության չէին ենթարկել: Պատժախցերում պահվող մյուս 2 ագատազրկվածները նշեցին, որ պատժախցում պահվելու առաջին 3 օրերին չեն բացվել մահճակալները, և նրանց չեն տրամադրվել անկողնային պարագաներ, ինչպես նաև՝ նրանց գրկել են զբոսանքից:

«Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» օրենքի 47-րդ հոդվածի հիման վրա ՀՀ ոստիկանության պետի 14.01.05 թ. Ա1-Ն հրամանով հաստատվեց ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում (ՁՊՎ) հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը: 10.03.06 թ. ձևավորվեց ՁՊՎ-ներում հասարակական դիտորդների խումբը, որի լիազորությունների մեջ մտնում է միայն ՁՊՎ-ներ այցելելը: Այսինքն՝ խումբը գրկված է ոստիկանական բաժանմունքներ այցելության հնարավորությունից, մինչդեռ պրակտիկան ցույց է տալիս, որ խոշտանգումներ կատարվում են հենց ոստիկանական բաժանմունքներում: Ոստիկանությունը, առանց փաստաթղթային ձևակերպման բերման ենթարկելով անձանց, և առանց իրենց կարգավիճակը հայտնելու՝ պահում է բերման ենթարկվածներին ոստիկանական բաժանմունքներում, որտեղ էլ կիրառվում են ծեծ և դաժան վերաբերմունք: Հիմնականում բռնությունների ենթարկվածները հասարակական հնչեղություն չեն տալիս

կատարվածին, երբեմն չեն էլ հայտնում իրականությունը:

Կալանավորվածների շուրջ 60 տոկոսը հայտնել է, որ իրենց ծեծել են ձեռքակալման ժամանակ կամ ոստիկանական բաժանմունքներում: Սակայն մեկուսարանների ընդունման մատյաններում վնասվածքները կամ չեն արձանագրվում, կամ արձանագրվում են մակերեսորեն:

Ապրիլի 20-ին Արմեն Ղամբարյանին, թմրանյութ վաճառելու կասկածով, բերման են ենթարկել հանրապետության ոստիկանության կազմակարգված հանցավորության դեմ պայքարի բաժին և այնպես ծեծել, որ փայծաղը պատռվել է և ինն օր անց վիրահատությամբ հեռացվել: 10 օր ուշացումով, մայիսին արված դատաբժշկական փորձաքննության մեջ արձանագրված են մարմնական վնասվածքները՝ աչքի տակի կապտուկ, մարմնի տարբեր տեղերի արնազեղումներ, թիակի սալջարդ, ոտքերի քերծվածքներ, փայծաղի պատռվածք ու ներքին արնահոսություն, որոնք դատախազությունն անտեսել է ու նրա դեմ քրեական գործ հարուցել, որով Ղամբարյանին սպառնում է 7-15 տարվա ազատազրկում:

Դատապարտյալների հիվանդա-

նոցում Հելսինկյան կոմիտեի «Դիտորդ» պարբերականի թղթակցին Ղամբարյանը պատմեց, որ ոստիկանությունում իրեն, մեկ օր դաժանաբար ծեծելով, ստիպեցին ընդունել, որ իր դիմաց ոստիկանների դրած թմրանյութը իրենն է, և որ ինքը զբաղվում է թմրանյութերի վաճառքով: Ղամբարյանն ասում է, որ ահավոր վախի պատճառով Նուբարաշենի մեկուսարանի բժշկական հետազոտության ժամանակ ասել է, թե վերքերը ստացել է ընկնելուց: Միայն մայիսի 10-ին, հիվանդանոցում պառկած ժամանակ, Ղամբարյանը պայմանագիր է կնքում փաստաբանի հետ և Երևանի դատախազություն հայտարարություն գրում, որ իրեն ծեծել են:

Էրեբունի համայնքի դատախազի տեղակալ Սարգիս Մնացականյանը քրեական գործի հարուցումը մերժելու որոշում է ընդունում՝ հիմնավորումով, թե Ղամբարյանը մարմնական վնասվածքներն ստացել է վայր ընկնելուց:

Մնացականյանը Նուբարաշենի մեկուսարանում հարցաքննել է Ղամբարյանին՝ առանց փաստաբանի ներկայության, և, ըստ Ղամբարյանի, վախեցնելով, ընտանիքի նկատմամբ հաշվեհարդար տեսնելու սպառնալիքով ստիպել, որ ասի, թե ընկել է:

5.

Մարդու իրավունքները ՀՀ զինված ուժերում

ՀՀ զինված ուժերում շարունակվում են միջանձնային ոչ կանոնադրական հարաբերությունները և սպայական կազմի անպատժելիությունը, որի հետևանքով բանակում գոհերի թիվը ամեն տարի հասնում է

տասնյակների:

Հ ա մ ա ձ ա յ ն Հ Հ ա զ գ ա յ ի ն անվտանգության ռազմավարության հայեցակարգի VII-րդ գլխում ամրագրված սկզբունքների, ինչպես նաև՝ ՆԱՏՕ-ի և ՀՀ-ի միջև անհատական

գործընկերության գործողությունների ծրագրի 1.6 կետի՝ նախատեսվում է ՀՀ զինված ուժերում իրականացնել քաղաքացիական վերահսկողություն: Սակայն այդ դրույթները առայժմ չեն գործում, և բանակը հիմնականում փակ է հասարակության համար:

Բանակում եղած զոհերի մասին պետական մարմինները իրարամերժ տվյալներ են հաղորդում: Ըստ ՀՀ արտգործնախարարության «Human rights watch» զեկույցին տված պատասխանի՝ 2005 թ. բանակում գրանցվել է մահվան 14 դեպք, ըստ դատախազության՝ 28 դեպք, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ 89:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի 2007թ. հունվարի 19-ի հայտարարության՝ 2005 թ. եղել է 47 զոհ, իսկ 2006 թ.՝ 33:

Աննախադեպ էր զինծառայողներ Հովսեփ Մկրտումյանի և Ռոման Եղիազարյանի սպանության մեջ մեղադր-

վող զինծառայողներ Ռազմիկ Սարգսյանի, Արայիկ Ջալանի և Մուսա Սերոբյանի քրեական գործի դատաքննությունը: ՀՀ վերաքննիչ դատարանը երեք մեղադրյալներին դատապարտել էր ցմահ ազատազրկման (մանրամասները տե՛ս «Դիտորդ» 4(34) 2006 թ., էջ11-15): ՀՀ վճռաբեկ դատարանը 2006 թ. դեկտեմբերի 22-ին բեկանեց վերաքննիչ դատարանի դատավճիռը, վերացրեց խափանման միջոցը և գործն ուղարկեց լրացուցիչ նախաքննության:

Այս գործը ՀՀ-ում հասարակական մեծ հնչեղություն և միջազգային արձագանք էր ստացել: ՀՀ իշխանություններին էին դիմել «Human rights watch» և «Հելսինկյան միջազգային ֆեդերացիա» իրավապաշտպան կազմակերպությունները՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավարությունները որակելով որպես անարդար:

6.

Խոսքի և արտահայտվելու ազատություն

2002 թվականից, երբ «Ա1+» հեռուստաընկերությունը եթերից զրկվեց, Հայաստանում սկսվեց խոսքի ազատության սահմանափակում: Մյուս հեռուստաընկերությունները կորցրեցին իրենց ազատությունը և այս կամ այն չափով գտնվում են իշխանությունների հսկողության ներքո, գործում է քողարկված գրաքննություն:

Մայիսի 25-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հայտարարեց ռադիոհեռարձակման արտոնագրման 2005 թ.

դեկտեմբերի 27-ին կայացած մրցույթի արդյունքները՝ Երևանում երկու թափուր հաճախականությունների համար (90.3 և 90.7 մհց): «Ա1+» հեռուստաընկերության հիմնադիր «Meltex» ՍՊԸ-ն կրկին չատացավ այդ հաճախականություններում հեռարձակելու իրավունք:

Այսպիսով, 2002 թ. ապրիլին եթերից զրկվելու օրվանից մինչ օրս «Ա1+»-ը մասնակցել է հեռուստատեսության (8) և ռադիոյի (4) համար լիցենզավորման բոլոր մրցույթներին (բացառությամբ 2005 թ. հայտարար-

ված երևանյան մրցույթի, քանի որ այն վերահեռարձարկման լիցենզիաներ էր առաջարկում միայն արդեն իսկ գոյություն ունեցող ալիքների համար): «Ա1+»-ը «պարտվեց» բոլոր մրցույթներում:

«Հեռուստատեսության և ռադիոյի» մասին օրենքի 17-րդ հոդվածը, ըստ որի՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները, կուսակցությունները չեն կարող լինել մասնավոր հեռուստատեսության հիմնադիր, խախտվում է, քանի որ երեք հեռուստատեսություն, գրանցված լինելով որպես մասնավոր հեռուստատեսություն, պատկանում են կուսակցությունների, «Երկիր մեդիան»՝ ՀՅ Դաշնակցությանը, «Կենտրոնը»՝ «Բարգավաճ Հայաստանին», «ԱԼՄ»-ն՝ «Ժողովրդական կուսակցությանը»: Մի շարք մարգարի հեռուստատեսություններ պատկանում կամ վերհսկվում են մարգպետների կողմից:

2006 թ. տեղի են ունեցել լրագրողների դեմ բռնությունների և քրեական հետապնդման դեպքեր: Որպես կանոն՝ լրագրողների դեմ կատարված բռնությունների պատվիրատուները չեն բացահայտվում իրավապահների կողմից և չեն պատժվում:


Հունվարի 30-ին Երևանի կենտրոնում հարձակում է կատարվել «Հայկական ժամանակ» օրաթերթի սպորտային մեկնաբան Դավիթ Ջալալյանի վրա: Անձանոթ տղամարդը դանակահարել է լրագրողին: Դավիթ Ջալալյանի և «Հայկական ժամանակի» գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի կարծիքով՝ դա կարող էր կապված լինել լրագրողի մասնագիտական գործունեության հետ:

Մայիսի 16-ի վաղ առավոտյան Վանաձորում քարկոծվել է «Լոռի» հեռուստաընկերության գործադիր

տնօրեն Նարինե Ավետիսյանին պատկանող մեքենան: Ժամանակավոր կացարաններում ապրող քաղաքացիների հիմնախնդիրներին, ցածր գներով և առանց աճուրդի հողերի վաճառքին նվիրված հաղորդման ավարտից հետո Ն. Ավետիսյանը, դուրս գալով փողոց, տեսել է, որ իր մեքենայի ապակիները կոտրված են, իսկ կողքին կայանված երկու այլ մեքենաներն անվնաս են: Փետրվարի 23-ին նրան վիրավորել է քաղաքի միկրոավտոբուսների երկու զծերի սեփականատերը: Ձեռնարկատիրոջ դժգոհությունն են առաջացրել հեռուստաընկերության եթերում քաղաքի տրանսպորտի գների աճի հարցի արձարծումը:

«Սյունյաց երկիր» օրաթերթում 2006 թ. հունիսի 15-ին տպագրվել էր Սյունիքի էներգահամակարգի կոռուպցիայի մեղադրանքի վերաբերյալ հոդված: Հունիսի 21-ին խմբագրություն է այցելել «Հայաստանի էլեկտրաբանակցություն» ՓԲԸ ղեկավարությունը, մերժել պատասխան տպագրելու խմբագրության առաջարկը: Անջատվել է «Սյունյաց երկիր» գրասենյակի հոսանքը:

Նուբարաշեն համայնքի աշխատակիցները և համայնքի ղեկավար Սիեր Հովհաննիսյանի մերձավորները հուլիսի 12-ին հարձակվել են Նուբարաշենում ապրող «Չորրորդ իշխանություն» և «Առավոտ» թերթերի ազատ լրագրող Գագիկ Շամշյանի վրա: Լրագրողին սպառնացել են, վիրավորել, խլել նրա սեփականությունը: Դա շարունակվել է հետագա օրերին: Հուլիսի 13-ին անջատվել են լրագրողի բնակարանի էլեկտրական հոսանքն ու հեռախոսագիծը: Հուլիսի 18-ին Նուբարաշենի շուրջ տասը բնակիչներ «բողոքի ակցիա» են կազմակերպել Գագիկ Շամշյանի դեմ՝



Գագիկ Շամշյանը

«Չորրորդ իշխանություն» թերթում հուլիսի 11-ին հրապարակված հոդվածի կապակցությամբ (որտեղ մասնավորապես խոսվում էր Նուբարաշենի ղեկավարի երկու բարեկամների մասին, որոնք մեղադրվում են բանկի թալանման մեջ): Գագիկ Շամշյանը դիմել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազը քրեական գործ է հարուցել քր. օրենսգրքի 164 հոդվածով (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը), 176-րդ հոդվածի 1-ին մասով (կողոպուտ) և 258-րդ հոդվածի 3-րդ մասով (խուլիգանություն): Իսկ օգոստոսի 3-ին ՀՀ ոստիկանության գլխավոր հետախուզական բաժնի Էրեբունու հետախուզական ստորաբաժանումը քրեական գործ է հարուցել լրագրող Գագիկ Շամշյանի դեմ: Լրագրողը մեղադրվում է ՀՀ քր. օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասով (վիրավորանք), 178-րդ հոդվածի (խաբարխություն) և 182-րդ հոդվածի 1-ին մասով (չորթում):

Սեպտեմբերի 6-ին «Իրավունք» թերթի խմբագիր Հովհաննես Գալաջյանի վրա տեղի է ունեցել հարձակում. երկու սափրագլուխ երիտասարդ տղամարդ, նրան գետին տապալելով, սկսել են հարվածել: Տեսնելով, որ գրավում են անցորդների ուշադրությունը, հարձակվողները հեռացել են: Ինչպես ցույց է տվել բժշկական քննությունը, Հովհաննես Գալաջյանը ստացել է թեթև մարմնական վնասվածքներ: Արաբկիր համայնքի ոստիկանության բաժինը քրեական գործ է հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով (ծեծ):

Հունվարի 12-ին ՀՀ վերաքննիչ դատարանն ավարտեց «Ժամանակ-Երևան» օրաթերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանի գործի լուսմը: 2006 թ. սեպտեմբերի 8-ին Երևանի Կենտրոն ու Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը Արման Բաբաջանյանին մեղավոր էր ճանաչել՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար փաստաթղթերի կեղծման մեջ: Գործի քննումը վերաքննիչ դատարանում սկսվել է հոկտեմբերի 24-ին: Բացի այդ՝ հոկտեմբերի 16-ին Արման Բաբաջանյանը դիմել է Շենգավիթ համայնքի զինկոմիսարիատ՝ խնդրելով ազատել իրեն զինվորական ծառայությունից՝ հիմք ընդունելով «Ընթացակարգի խախտումներով պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը (տե՛ս «Երևանի մամուլի ակումբ» շաբաթաթերթ, նոյեմբերի 10-16, 2006): Վերաքննիչ դատարանի հունվարի 12-ի դատավճռով փոքր-ինչ մեղմացվեց պատիժը՝ Արման Բաբաջանյանին դատապարտելով 3,5 տարի ազատազրկման: Վճիռը կայացվել է՝ առանց մեղադրյալի փաստաբանի: Բացի այդ՝ դատարանը մերժեց Ար-

ման Բաբաջանյանի միջնորդությունը՝ վերջին խոսքը պատրաստելու համար իրեն ժամանակ տրամադրելու մասին: Մերժվել էր նաև լրագրողի փաստաբանների նախորդ միջնորդությունը նիստը տեղափոխելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարի կողմից գլխավորած հատուկ միջգերատեսչական հանձնաժողովը Բաբաջանյանի դիմումին պատասխան չի տվել:



Արման Բաբաջանյանը՝ դատարանում

Ըստ Արման Բաբաջանյանի փաստաբան Ջարուհի Փոստանջյանի՝ դիմելու են ՀՀ վճռաբեկ դատարան, նաև գործ է պատրաստվում վերոնշյալ միջգերատեսչական հանձնաժողովի գործողությունների դեմ:

Իրավաբանները նշում են, որ 2006 թ. դեկտեմբերի 27-ի նիստի ընթացքում հանձնաժողովը որոշել է դիմել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ճշտելու, թե արդյոք կարելի՞ է Արման Բաբաջանյանի նկատմամբ կիրառել համապատասխան օրենքը: Սակայն ոչ գլխավոր դատախազության պատասխանի, ոչ էլ հանձնաժողովի վերջնական որոշման մասին փաստաբաններին տեղեկություն չի հայտնվել: Հանձնաժողովում դրական որոշում է կայացվել 2000 դիմողների վերաբերյալ, և Արման Բաբաջանյանին հնարավոր մերժումը կարող է որակվել որպես խտրականություն:

Արմինե Օհանյանը, որ թղթակցում է «Ժամանակ-Երևանին», ազատվել է քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ դատարանի մամլո քարտուղարի պաշտոնից: «Ինձ առաջարկել են ընտրել՝ կամ հրապարակումները, կամ մամլո քարտուղարի պաշտոնը: Ես ընտրեցի առաջինը», - հայտնել է Արմինե Օհանյանը «Առավոտ» օրաթերթին (2006 թ., հուլիսի 1): «Առավոտը» ենթադրում է, որ լրագրողին գործից ազատելու համար «վերջին կաթիլը» հանդիսացավ Արման Բաբաջանյանի մասին լրագրողի հոդվածը:

2002 թ. հուլիսի 3-ին ընդունվել է ՀՀ «Կուսակցությունների մասին» օրենքը: Ըստ օրենքի 5-րդ հոդվածի՝ «Կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 200 անդամ, առանձնացված ստորաբաժանումներ ՀՀ մարզերի առնվազն 1/3-ում, ներառյալ՝ Երևանում»: Օրենքի 15.01.2005թ. փոփոխություններով և լրացումներով այդ պահանջները խստացվեցին. սահմանվեց, որ «պետական գրանցման պահից ոչ ուշ, քան 6 ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ոչ պակաս, քան 100 անդամ, և տարածքային ստորաբաժանումներ ՀՀ բոլոր մարզերում, ներառյալ՝ Երևան քաղաքում, որի մասին գրավոր տեղեկացում է պետական լիազորված մարմնին»: Այս պահանջները չբավարարելու հիմքով (33-րդ հոդվածի 3-րդ մաս) ընդհանուր իրավասության դատարանների վճիռներով լուծարվել է 49 կուսակցություն: Օրենքով նախատեսված ցուցակներ ներկայացրած կուսակցությունները արդարադատության նախարարության կողմից վերագրանցվեցին: Նշենք, որ չկա ներկայացվող ցուցակները ստուգելու մեխանիզմ:

Ընդհանուր առմամբ, «Կուսակցությունների մասին» օրենքը, ըստ էության, չի խոչընդոտում կուսակցությունների գրանցումն ու գործունեությունը: Սակայն գործնականում Հայաստանում ապահովված չէ կուսակցությունների հավասար մրցակցությունը թե՛ ընտրությունների ընթացքում, թե՛ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ապահովված չեն

ինչպես լրատվամիջոցներից, հատկապես էլեկտրոնային, օգտվելու կուսակցությունների հավասար հնարավորությունները, այնպես էլ՝ հավաքների ազատությունը, գրասենյակների ազատ գործունեությունը, ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունները:

2006 թ. մարտի 4-ին «Ժառանգություն» կուսակցությունը, առանց որևէ օրինական հիմքի, վտարվեց իր կենտրոնական գրասենյակից (որը կուսակցությունը մինչև 2007 թ. վարձակալել էր Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում): «Ժառանգության» վարչության անդամները և գրասենյակի անձնակազմը իրենց հերթին գրկված են գրասենյակում գտնվող փաստաթղթային բազայից և կուսակցության կնիքից օգտվելու հնարավորությունից: Օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որոնց դիմել է կուսակցությունը (նստիկանություն, դատախազություն, առաջին, երկրորդ և երրորդ ատյանների դատարաններ), որևէ արդյունք չեն տվել: Մարտի 8-ին, «Ժառանգության» կենտրոնական գրասենյակի փակումից 4 օր անց, անհայտ անձինք մուտք են գործել գրասենյակի գլխադասային համակարգիչ, որը տեղեկատվություն էր պարունակում կուսակցության, նրա անդամների թվակազմի և գործունեության մասին: Համակարգիչը փորձաքննության ենթարկելուց հետո ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» փորձագետները հաստատեցին, որ այդ գիշեր համակարգիչն իսկապես 22-24 լույս տևողությամբ միացված է եղել: Դրան միացվել են օտար սննիտոր և հիշողության կրիչ: ՀՀ նստիկանություն

նը և ՀՀ դատախազությունը մերժեցին իրականացնել համապատասխան հետաքննություն՝ հանցակազմի բացակայության հիմքով:

«Ժառանգություն» կուսակցության անդամների հանդեպ հանրապետությունով մեկ գործադրվում են հետապնդումներ, ձերբակալության, աշխատանքից ազատելու սպառնալիքներ: Ապարանի, Եղվարդի, Սիսիանի, Եղեգնաձորի ու Կապանի տարածքային կառույցների գրասենյակներից կուսակցության ցուցանակները գիշերը հանվել են:

«Ժառանգություն» կուսակցությունը դիմել էր «Նուշիկյան» ընկերությանը՝ գովազդի վահանակ (billboard) տրամադրելու խնդրանքով, որը չի մերժվել (ըստ ընկերության՝ այդ պահին առկա է եղել 57 ազատ վահանակ): Մի քանի օր անց, սակայն, ընկերությունը հայտարարել է կուսակցության ներկայացուցչին, որ ազատ վահանակներ չկան: Նույնը տեղի է ունեցել, երբ կուսակցությունը դիմել է «Ջեբրա» ընկերությանը:

Իշխող կուսակցություններն իրենց վարչական լծակներն օգտագործում են կուսակցությունները համարելու նպատակով՝ քաղաքացիներին ներկայացնելով աշխատանքից զրկվելու հեռանկար՝ կուսակցությանն անդամագրվելու պահանջը չկատարելու պարագայում: Այս գործընթացը մեծ կիրառում ունի հատկապես տվյալ կուսակցության վերահսկողության տակ գտնվող մարզերում, ՏԻՄ-ներում, կրթական և առողջապահական հաստատություններում, ինչպես նաև՝ մասնավոր ձեռնարկություններում:

Բացի իշխող կուսակցություններին ֆինանսավորելուց՝ գործարարները նաև անդամագրվում են դրանց: Այսպես, երբ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանը դարձավ Հան-

րապետական կուսակցության անդամ, մեծ թվով գործարարներ նույնպես համարեցին Հանրապետականի շարքերը: Իսկ երբ «Օրինաց երկիր» կուսակցությունը, որը 2003 թ. խորհրդարան էր մտել առանձին, այնուհետև երկու այլ կուսակցության հետ (Հանրապետական և Դաշնակցություն) կազմել իշխող կոալիցիա, 2006 թ. ամռանը դուրս եկավ կոալիցիայի կազմից, կուսակցության կազմից անմիջապես դուրս եկան գործարար անձինք՝ ստեղծելով «Գործարար» պատգամավորական խումբը, որից հետո խմբի պատգամավորների մի մասը անդամագրվեց Հանրապետական կուսակցությանը:

Իշխող կոալիցիայի կազմից դուրս գալուց հետո ՕԵԿ-ը բազմաթիվ խոչընդոտների հանդիպեց: ՕԵԿ-ի օրինակը ՀՀ-ում իշխանամետ և ընդդիմադիր կուսակցությունների անհավասար մրցակցության դրսևորում է:

Ըստ «Օրինաց երկիր» կուսակցության (ՕԵԿ) տրամադրած տեղեկությունների՝ ՕԵԿ-ի մարզային այցելությունների ժամանակ տեղական հեռուստաընկերությունները նկարահանում են ՕԵԿ-ի և բնակիչների հանդիպումները, սակայն երբևէ չեն լուսաբանում տեղական լուրերով: Յուրաքանչյուր հանդիպումից հետո հեռուստաընկերությունները եթեր են հեռարձակել ՕԵԿ-ի և նրա նախագահ Արթուր Բաղդասարյանի դեմ պատվիրված վարկաբեկիչ ֆիլմ: Այդպիսի նյութեր եթեր են տրվել Վանաձորի, Գյումրու, Հրազդանի, Սևանի, Գավառի տեղական հեռուստաընկերություններով:

2006 թ.-ի նոյեմբերի 6-ին ՕԵԿ-ի փոխնախագահ Սիեր Շահգելոյանը կուսակցության անունից դիմում է հղել ՀՀ Գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին՝ պարզելու ֆիլմի և դրա ցուցադրման պատվիրատուներին:

Գավառի «Քյավառ» հեռուստա-

ընկերության տնօրեն Աշոտ Խանդանյանը այս հարցի շուրջ պարզաբանումներ տալու մեր խնդրանքին հրաժարվեց պատասխանել:

2006 թ. հոկտեմբերին Վանաձորի «Միգ» հեռուստաընկերությունը Արթուր Բաղդասարյանի հետ հարցազրույց է պատրաստում: Սակայն հարցազրույցն այդպես էլ եթեր չի հեռարձակվում: Ըստ «Միգ»-ի տնօրեն Սամվել Հարությունյանի՝ Ա. Բաղդասարյանի խոսքում քննադատություն կար՝ ուղղված Լոռու մարզպետի դեմ, որոնք մոնտաժելու իր առաջարկությունը մերժվել է, ուստիև ֆիլմը եթերով չի ցուցադրվում: Նա մտավախություն է հայտնել, որ ֆիլմի ցուցադրման դեպքում ինքը կարող է 500.000 տուգանքի ենթարկվել կամ զրկվել արտոնագրից:

2005 թ. վերջից սկսած՝ «Ժառանգություն» կուսակցության և նրա ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելն արգելված է հեռուստատեսություններում: Փոխարենը՝ Հովհաննիսյանի կնոջ՝ Արմինե Հովհաննիսյանի վերաբերյալ «Հայլուրդ» ապատեղեկատվություն տարածեց, թե նրա ղեկավարած բարեգործական կազմակերպությունը ֆինանսավորում է ամուսնու կուսակցությունը, իսկ Ռաֆֆի Հովհաննիսյանին իշխանամետ թերթերից մեկը մեղադրեց ամերիկյան լրտես լինելու մեջ՝ առանց որևէ ապացույցի: Բոլոր հերքող փաստերը իշխանության վերահսկողության տակ գտնվող ՋԼՄ-ները մերժեցին հաղորդել: Արմինե Հովհաննիսյանը կարողացավ պատասխանել միայն «Ազատություն» ռադիոկայանի միջոցով:

8.

Չանրահավաքներ, ժողովներ, երթեր, ցույցեր

Չնայած 2006 թ. առանձնապես քաղաքական ակտիվ տարի չի եղել, զանգվածային միջոցառումներ ընդդիմության կողմից չեն անցկացվել, սակայն հաճախ խոչընդոտվել են ընդդիմության դահլիճային հանդիպումներ անցկացնելու փորձերը՝ դահլիճներ չտրամադրելու, կուսակցության ժողովներին աջակցած անձանց աշխատանքից հեռացնելու միջոցով և կազմակերպիչների նկատմամբ ոստիկանության հետապնդումներով:

Հատկապես խոչընդոտվել է «Ժառանգություն» և «Օրինաց երկիր» կուսակցությունների գործունեությունը, որոնք փորձում էին առավել ակտիվություն ցուցաբերել ընդդիմադիր կուսակցությունների մեջ:

2006 թ. մայիսի 20-ին Արմավիրի բնակչության հետ «Ժառանգություն» կուսակցության հանդիպումը կազմակերպելու համար ոստիկանություն բերման է ենթարկվում գրասենյակի աշխատակից Լևոն Մարգարյանը:

Եղեգնաձորի քաղաքապետ Սիրակ Բաբայանի կողմից արգելվում է 2006 թ. մայիսի 6-ին նախատեսված հանրահավաքը: Կուսակցության գրասենյակներից անհետանում են ցուցանակները:

2006 թ. մայիսի 6-ին նախատեսված հանրահավաքը: Կուսակցության գրասենյակներից անհետանում են ցուցանակները:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից մերժվում է դահլիճի տրամադրումը «Ժառանգություն» կուսակցությանը՝ համագումար անցկացնելու համար, Գյումրու «Հոկտեմբեր» կ/թ տնօրինությունը ևս կուսակցությանը հանդիպման համար դահլիճը չի տրամադրում:

Մերժվել է նաև «Քաղաքացիական ազգային նախաձեռնություն» (նախագահ Բ. Հովհաննիսյան) հասարակական կազմակերպությանը Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի, ինչպես նաև՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի և «Կարեն Դեմիրճյանի» մարզահամերգային համալիրի դահլիճների տրամադրումը:

Մերժվել է նաև կառավարության նիստերի դահլիճի տրամադրումը «Նոր ժամանակներ» կուսակցությանը՝

2006 թ. մարտ-ապրիլ ժամանակահատվածում կուսակցության կոնֆերանս անցկացնելու համար:

«Օրինաց երկիր» կուսակցությունը իշխող կոալիցիայից դուրս գալուց հետո ամենուր հանդիպում է խոչընդոտների: Հանդիպում անցկացնելու համար «Հայաստան» կ/թ դահլիճի տրամադրումը կուսակցությանը մերժվել է, իսկ Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Ալբերտ Ժամհարյանը, թատրոնի շենքի դահլիճը սեպտեմբերի 2-ին «Օրինաց երկրին» տրամադրելուց հետո, ազատվել է աշխատանքից:

Հատկապես Երևանի դպրոցներում տնօրենները դահլիճներ չեն տրամադրում ՕԵԿ-ին՝ դա պատճառաբանելով աշխատանքից հեռացվելու մտավախությամբ:

9.

Խղճի ազատություն, այլընտրանքային ծառայություն

Գլխավոր դատախազությունն ընդունեց, որ հանցանք չեն կատարել 21 Եհովայի վկաները, որոնք 2005 թ., այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու պատճառով, ութ ամիս բանտում են եղել (22-րդը մահացավ ավտովթարից): Նրանցից 15-ին դատարաններն արդեն դատապարտել էին ազատագրկման՝ դասալքության և ծառայության վայրը լքելու մեղադրանքներով: Նրանք բոլորն ազատվեցին կալանքից, երբ դատարանները նրանց գործերը, դատախազության միջնոր-

դությամբ, հետ ուղարկեցին լրացուցիչ քննության: Դատախազությունները միջնորդությունները հիմնավորել էին, որ նախաքննության մարմինը օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի կատարել: Մարզային դատախազությունները կարճեցին նրանց դեմ հարուցված քրեական գործերը՝ իրադրության փոփոխության հիմնավորմամբ: Եհովայի վկաները բողոքարկեցին դատարանի որոշումները՝ պահանջելով արդարացման դատավճիռ, սակայն վճռաբեկ դատարանը նույնը թողեց որոշ-

ումները: Եհովայի վկաները դիմեցին Եվրոպայի մարդու իրավունքների դատարան: Հետագայում գլխավոր դատախազությունը կարճեց գործերը՝ հանցակազմի բացակայության հիմնավորմամբ:

22 Եհովայի վկաներ և մեկ մոլորական հրաժարվել էին այլընտրանքային ծառայությունից, քանի որ այն զինվորական բնույթ ուներ և վերահսկվում էր զինվորական ոստիկանության կողմից (օրինակ՝ հիվանդության դեպքում այլընտրանքային ծառայության մեջ գտնվող անձինք պետք է բուժվեին զինվորական հուսպիտաններում):



Լենա Կարաթեսյանը և Ջոյա Թամարյանը

2004 թվականից ուժի մեջ մտած այլընտրանքային ծառայության մասին օրենքն այժմ չի գործում, քանի որ ոչ ոք չի ցանկանում մեկնել ծառայության: Այսպիսով, չի կատարվում այլընտրանքային ծառայություն մտցնելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի առաջ Հայաստանի ստանձնած պարտավորությունը: Այժմ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար բանտում են գտնվում 54 Եհովայի վկաներ:

Հասարակության մեջ աճել է անհանդուրժողականությունը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, որ կապվում է ՋԼՄ-ներում նրանց դեմ տարվող քարոզչության հետ (օրինակ՝ «Ազգ» օրաթերթում մի հայ առաքելական եկեղեցու հոգևորական ասում է, որ Եհովայի վկաները, հոգեգալստականները և մյուս «քայքայիչ» աղանդները նման են սպիդի, «որ այս դեպքում քայքայում է մարդու մտավոր ունակությունները», իսկ խմբագիր Ավետիքյանը մի այլ առիթով գրում է, որ կրոնական փոքրամասնություններին իր թերթը քննադատում է և քննադատելու է՝ նրանց մոլորեցնող քարոզչության և ագրեսիվության համար):

Եհովայի վկաները հայտնում են, որ 2006 թվականի ընթացքում փողոցներում իրենց հինգ հավատակիցների են ծեծել: Օգոստոսի 21-ին Շենգավիթի համայնքում, փողոցում, քահանա Աշոտ Պողոսյանը ծեծել է Եհովայի վկաներ Լենա Կարապետյանին և Ջոյա Թամարյանին: Վերջինիս ձեռքը երկու տեղից կտրվել է: Ոստիկանությունը հարուցել էր քրեական գործ, սակայն կարճել է այն՝ քահանայի զոջման պատճառաբանությամբ: Քահանա Պողոսյանը ցուցմունք է տվել, թե կանանց ծեծել է, քանի որ նրանք Եհովայի վկա են:

«Վերջերս սկսել են բռնություններ մեր նկատմամբ,-ասում է Եհովայի վկա Լևոն Մարգարյանը,- եղել են շատ դեպքեր, որոնք չենք արձանագրել: Նկատվում է, որ հեռուստատեսային հաղորդումները և թերթերը մեծ դեր են խաղում: Մարդիկ ասում են՝ հեռուստատեսությամբ ձեր մասին էս ստեցին, ու լարվում են մեր դեմ»:

10.

Ազգային փոփոխության գործընթացներ

Դեկտեմբերի 7-ին նախագահի նստավայրի դիմաց եզրի, 67-ամյա Գյուլիգար Ավդալյանը իր և իր երեք թոռների վրա բեռնվեց և լցրել և վառել՝ որպես բողոքի նշան իր որդու՝ Քյարամ Ավդալյանի սպանության գործի անարդար քննության դեմ: Ըստ եզրիների համայնքի՝ նրան ծեծելով սպանել է Լճաշենի գյուղապետը՝ իր մտերիմների հետ, սակայն

կալանավորվել է մեղքն իր վրա վերցրած բողոքովին այլ մարդ: Եզրիների և գյուղապետի միջև վեճը ծագել է արտավայրի պատճառով: Եզրիները տասնամյակներ շարունակ իրենց ոչխարի հոտերը ամառները տարել են արածեցնելու լեռնային արտավայրեր, սակայն վերջին տարիներին տեղացիները թույլ չեն տալիս եզրիներին օգտագործել որոշ մասն տարածքներ:

11.

Սեփականության իրավունք

Սահմանադրական դատարանն (ՄԴ) այս տարվա ապրիլի 18-ի որոշմամբ Հյուսիսային պողոտային վերաբերող բոլոր իրավական ակտերը, այդ թվում՝ Կառավարության թիվ 1151 (սահմանում է սեփականատերերից օտարվող տարածքները), քաղաքացիական օրենսգրքի 218 (հողամասը պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելը), Հողային օրենսգրքի 104, 106, 108 հոդվածները (կրկին վերաբերում են հողամաս և անշարժ գույք վերցնելու իրավահարաբերություններին) ճանաչեց չ՛հաստատված և անշարժ գույք վերցնելու իրավահարաբերություններին) ճանաչեց չ՛հաստատված Սահմանադրությանը հակասող:

ՄԴ որոշումը, ըստ էության, երկու արդյունքի պետք է հանգեցներ՝ պետք է ընդունվեր Կենտրոնի կառուցապատումը կանոնակարգող օրենք, և նախկինում տուժած բնակիչները պետք է հնարավորություն ունենային «նոր հանգամանքի» ուժով դիմել դա-

տարան ու վերականգնել իրենց ունահարված իրավունքները: Սակայն ՄԴ որոշումը, նշված առաջին մասով, կատարվեց խիստ թերի, իսկ երկրորդով՝ ընդհանրապես չկատարվեց:

Դատարան դիմած բոլոր քաղաքացիները մերժվեցին, հակասահմանադրական ճանապարհով իրենց սեփականությունից զրկված Կենտրոնի մի քանի հարյուր բնակիչների իրավունքներն այդպես էլ չվերականգնվեցին, բնակիչները միայն հնարավորություն ստացան հետ ստանալ իրենց սեփականության դիմաց պարտադրված փոխհատուցումից զանձված 10 տոկոս եկամտահարկը: ՄԴ-ի որոշումից հետո շարունակվեցին Կենտրոնի բնակիչների՝ իրենց տներից վտարումներն ու սեփականության հարկադիր օտարումը:

Իսկ հոկտեմբերի 1-ից անմիջապես հետո (ՄԴ որոշմամբ՝ նշված

իրավական ակտերը անվավեր էին դառնում հոկտեմբերի 1-ից) կառավարությունն ու կառուցապատող օլիգարխները լծվեցին իրենց ձեռնտու օրենքի նախագծի ընդունմանը: Օրենքը, որ կոչվում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», պետք է ընդունվեր մայրաքաղաքի կառուցապատումն սկսելուց դեռ շատ առաջ. այդպես էր պահանջում գործող Սահմանադրությունը, դրանով պետք է կարգավորվեին մարդկանց հողերն ու բնակարանները օտարելու, Կենտրոնը կառուցապատելու բոլոր գործընթացները: Սակայն, նույնիսկ առաջիկայում իրացվող տարածքների բնակիչների իրավունքները պաշտպանելու առումով, իրականում ընդամենը փորձ է արվում օրենքով օրինականացնել իլման գործընթացները: Օրենքի նախագիծը պատրաստողներն ու անցկացնողները բացառապես կառուցապատողների շահով են առաջնորդվել, և շատ մասնագետներ այդ նախագծի վերաբերյալ բացասական կարծիք են հայտնել:

Օրենքը պետք է տար մի քանի հարցերի հստակ պատասխանները.

նախ՝ քանի որ ՀՀ Սահմանադրությունն ասում է, որ մարդու սեփականության իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն «բացառիկ դեպքերում», երբ առկա է հասարակության և պետության այնպիսի շահի բավարարման անհրաժեշտությունը, որը կարող է գերակա համարվել մարդու բարձրագույն արժեք համարվող իրավունքի նկատմամբ, ուստի առաջին հերթին պետք է սահմանված լինեն այդ «բացառիկության» դեպքը, որի առկայության պարագայում հասարակության և պետության կարիքի բավարարումը գերակա դիտվեր սեփականատիրոջ՝ ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող սեփականության իրավունքի նկատմամբ: Օրենքի գլխավոր թերությունն այն է, որ հստակ սահմանված չէ, թե որն է պետության և հասարակության կարիքը: «Բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշումը» վերնագրված հոդված 4-ում թվարկված է, թե ինչ նպատակներ կարող է հետապնդել այդ շահը: Այդ թվարկման տակ կարող է ընկնել տառացիորեն ամեն ինչ, և իշխանությունը կկարողանա ցանկացած վայրում հող ու տարածք խլել իր քաղաքացուց (*տե՛ս «Դիպորդ», 2006, N6*):

Զեկույցը դաժարացի

Ավետիս Իսխանյանը (ծրագրի ղեկավար),
Լիլիթ Սիմոնյանը, Վահան Իսխանյանը, Գայանե Սևրսյանը և
Արմինե Օհանյանը.

Կոռուպցիայի բաժինը՝ Տարածաշրջանային զարգացման կենտրոն -
Թրանսփարենսի ինստիտուտի Հայաստանի ՀԿ-ն:

